ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԵՎ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ
ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

1. 2013 թվականին ՀՀ գյուղատնտեսության ոլորտում գրանցվել են դրական տեղաշարժեր: ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալներով 2013 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին գյուղատնտեսության համախառն արտադրանքի արժեքը կազմել է 857.4 մլրդ դրամ, որը գերազանցում է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը 6.1 %-ով: Աճն ապահովվել է ինչպես բուսաբուծության, այնպես էլ անասնապահության արտադրանքի ծավալի ավելացման հաշվին:
2. Հաշվետու տարում դրական տեղաշարժեր են գրանցվել հողային ռեսուրսների, մասնավորապես վարելահողերի օգտագործման բնագավառում: Վարելահողերի նպատակային օգտագործման մակարդակը 2013 թվականին կազմել է 71 %, նախորդ տարվա 67.8 %-ի դիմաց:
3. Գյուղատնտեսության ոլորտում տնտեսավարողների ջանքերի և իրականացված մի շարք պետական աջակցության ծրագրերի արդյունքում գյուղատնտեսության արտադրության ծավալների ավելացումը նպաստել է երկրի համախառն ներքին արդյունքի մեջ գյուղատնտեսության ոլորտի տեսակարար կշռի որոշակի բարձրացմանը:
4. Համաձայն ՀՀ կառավարության 2013 թվականի գործունեության միջոցառումների ծրագրի և գերակա խնդիրների՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարության մասով նախատեսված միջոցառումները կատարվել են:
5. Վերոհիշյալ միջոցառումների և գերակա խնդիրների իրականացման վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվում է առանձին՝ ՀՀ վարչապետի 2009 թվականի սեպտեմբերի 24-ի N803-Ն որոշմամբ հաստատված ձևով (N4):

ԻՐԱՎԱՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

6. 2013 թվականին ագրարային ոլորտի իրավաօրենսդրական հիմքերի բարելավման նպատակով, նախարարության նախաձեռնությամբ, ընդունվել է ՀՀ կառավարության 84 և ՀՀ վարչապետի 31 որոշում, 1 օրենքի նախագիծ ներկայացվել է ՀՀ կառավարություն:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՃՅՈՒՂԵՐՈՒՄ ԵՎ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

<u>Բուսաբուծություն</u>

7. 2013 թվականին գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածություններն ավելացել են 14.0 հազ. հա-ով՝ կազմելով 318.2 հազ. հա, նախորդ տարվա 304.2 հազ. հա-ի դիմաց: Նախադրյալներ են ստեղծվել առաջիկա տարիներին նշված միտումը շարունակելու ուղղությամբ:
8. ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալներով 2013 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին բուսաբուծության համախառն արտադրանքը կազմել է 565.0 մլրդ դրամ, որը գերազանցում է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը 6.2 %-ով:
9. Ըստ օպերատիվ տվյալների բուսաբուծական մթերքների արտադրության ծավալները բնութագրող տվյալները ներկայացվում են ստորև.

(հազ. տոննա)

Մթերքները	2012թ.	2013թ. օպերատիվ	2013 թ. 2012թվականի նկատմամբ, %
Հացահատիկ և հատիկաընդեղենային մշակաբույսեր	456.1	547.1	119.9
այդ թվում՝ ցորեն	243.1	306.6	126.1
Կարտոֆիլ	647.2	653.8	101.0
Բանջարեղեն	849.0	874.9	103.1
Բոստան	205.1	209.2	102.0
Պտուղ և հատապտուղ	331.7	333.5	100.5
Խաղող	241.4	240.6.	99.7
Կուտակվել է խոտ	1346.7	1498.9	111.3

10. 2013 թվականին, ըստ օպերատիվ տվյալների, գրանցվել է գրեթե բոլոր (բացառությամբ խաղողի, որը հետևանք էր կարկտահարության պատճառած կորուստների) մշակաբույսերի համախառն արտադրանքի աճ: Առավել մեծ աճ է ապահովվել հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսերի, մասնավորապես ցորենի արտադրության բնագավառում:

11. 2013 թվականին իրականացվել են մի շարք ծրագրեր՝ ուղղված հանրապետության գյուղատնտեսության հողային ռեսուրսների նպատակային օգտագործման մակարդակի բարձրացմանը, հացահատիկային տնտեսության զարգացմանն ու հացահատիկային մշակաբույսերի ինքնաբավության մակարդակի բարձրացմանը: Դրանցից կարելի է առանձնացնել **<<2013 թվականի գարնանացանի համար գարու, եգիպտացորենի, առվույտի և կորնգանի արտադրության զարգացման>>** ծրագրի շրջանակներում Ռուսաստանի Դաշնությունից ներմուծված գարնանացան գարու՝ 700, եգիպտացորենի՝ 9.5, առվույտի՝ 52.1 և կորնգանի 360 տոննա սերմացուների և տեղական սերմարտադրողներից ձեռք բերված սերմացուների հետ միասին, մատչելի պայմաններով, հատկացվել է 6.3 հազ. շահառուի և ցանք է իրականացվել շուրջ 8.3 հազ. հա-ի վրա:

12. Ընթացիկ տարվա բերքի համար կարևոր նշանակություն ունեցավ **<<2010-2014 թվականների ցորենի սերմնաբուծության և սերմարտադրության զարգացման>>** ծրագիրը, որի շրջանակներում 2012 թվականին աշնանացանի իրականացման համար հանրապետություն էր ներկրվել աշնանացան ցորենի 640 տոննա էլիտային վերարտադրության սերմացու և ծրագրի պայմաններով շահառուներից հետ վերադարձված և գնված առաջին վերարտադրության աշնանացան ցորենի սերմացուն բաշխվել է գյուղատնտեսությունում տնտեսավարողներին: Ծրագրերի իրականացումը հնարավորություն ստեղծեց 2013 թվականի բերքի համար աշնանացանի տարածքները հանրապետությունում հասցնել ավելի քան 100.7 հազ. հա-ի, նախորդ տարվա 95.8 հազ. հա-ի դիմաց: Ծրագիրը շարունակվել է նաև հաշվետու տարում: Մասնավորապես, 2013 թվականին աշնանացանի համար Ռուսաստանի Դաշնությունից ձեռք է բերվել 440 տոննա էլիտային վերարտադրության սերմացու, ինչպես նաև տեղական սերմարտադրողներից հետ վերադարձվող և գնվող էլիտային ու առաջին վերարտադրության 3809 տոննա աշնանացան ցորենի սերմացուների հաշվին բավարարվել է մարզերից ստացված հայտերի ամբողջ պահանջարկը:

13. Հացահատիկային մշակաբույսերի սերմնաբուծության զարգացման համար կարևորվում է **<<Աշնանացան ցորենի սերմնաբուծության, բարձր վերարտադրության սերմերի արտադրության զարգացման ծրագիրը>>:** Ծրագրի շրջանակներում նախատեսվում է 2018 թվականին հանրապետությունում արտադրել 5500 տոննա էլիտային վերարտադրության սերմացու:

14. Նշված ծրագրերի և այլ միջոցառումների իրականացման արդյունքում, ըստ օպերատիվ տվյալների, աշնանացանի ցանքատարածությունները 2013 թվականին կազմել են 105.6 հազ. հա, նախորդ տարվա 100.7 հազ. հա-ի դիմաց:

15. Հաշվետու տարում բուսաբուծական մթերքների երաշխավորված բերքի ստացման նախադրյալների ստեղծմանն է ուղղվել «**Սերմերի որակի ստուգման ու պետական սորտափորձարկման միջոցառումների ծրագիրը**»: Ծրագրի իրագործումը հնարավորություն է ընձեռել կանխել գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային ցածր որակ ունեցող սերմերի և տնկանյութի օգտագործումն ու ապահովել կոնդիցիոն սերմերի վերարտադրությունը, ինչպես նաև բույսերի նոր սորտերի կազմի ընդլայնումը: Ծրագրի շրջանակներում ստուգվել է ընդամենը գարնանացան և աշնանացան մշակաբույսերի 16.1 հազ. տոննա սերմ, որից՝ հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսերի՝ 9.8 հազ. տոննա: Ծրագրի իրականացումը հնարավորություն է տալիս սորտափորձարկումների միջոցով ընտրել և Հայաստանի Հանրապետության գյուղացիական տնտեսությունների համար երաշխավորել բույսերի նոր արդյունավետ սորտեր, որոնց օգտագործումը կապահովի բարձր և կայուն բերքատվություն, որակյալ արտադրանք, ինչպես նաև տարեկան շուրջ 10000 հեկտար

հողատեսքերի վրա կբարելավվի հողերի բուսասանիտարական վիճակը՝ ցանքի համար երաշխավորելով համալիր լաբորատոր փորձաքննության ենթարկված սերմեր:
16. 2013 թվականին **«Բույսերի պաշտպանության միջոցառումներ» ծրագրի** շրջանակներում ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից պայքարի միջոցառումներ են իրականացվել հետևյալ բաղադրիչներով.
1) պայքար մկնանման կրծողների դեմ՝ այս բաղադրիչով 2013 թվականի գարնանը և աշնանը ՀՀ մարզպետարաններին ու <<Հայանտառ>> ՊՈԱԿ-ին անհատույց հատկացվել է 7736.9 կգ ցինկի ֆոսֆիդ մկնասպան միջոց: Պայքար է իրականացվել 64.5 հազ. հա առավել վարակված գյուղատնտեսական նշանակության հողատեսքերում և 649.2 հա անտառային տարածքներում: Հողօգտագործողների միջոցով պայքար իրականացված տարածքներում մկնանման կրծողներով վարակվածության աստիճանը նվազել է շուրջ 80 տոկոսով:
2) պայքար անտառի վնասատուների և հիվանդությունների դեմ՝ 2013 թվականի մայիսին պայքարի աշխատանքներ են իրականացվել 8870 հա անտառային տարածքներում: Պայքարի միջոցառումների իրականացման արդյունքում բարելավվել է նշված անտառային տարածքների բուսասանիտարական վիճակը: Վնասակար օրգանիզմների քանակը նվազել է շուրջ 85 տոկոսով:
17. Ծրագրի իրականացման արդյունքում հանրապետությունում ստեղծվել է կայուն բուսասանիտարական վիճակ:
18. Ագրոտեխնիկական պահանջներով պարարտանյութերի օգտագործման և երաշխավորված բերքատվության ապահովման նախադրյալների ստեղծման համար հաշվետու տարում իրականացվել է «**Հողերի ագրոքիմիական հետազոտության և բերրիության բարձրացման միջոցառումներ**» **ծրագիրը:** Հետազոտվել է 106.7 հազ. հա գյուղատնտեսական նշանակության հողատարածք: Փորձաքննության արդյունքների հիման վրա կազմվել է 171 ագրոքիմիական քարտեզ և մշակաբույսերի պարարտացման երաշխավորագիր: Ծրագրի իրականացման արդյունքները հիմք են ծառայում հիմնավորված պարարտացման նորմերի սահմանման և գյուղական համայնքներին տրամադրման համար:
19. **«Աջակցություն պտղի և ընկուզենու արտադրությանը»** ծրագիրն ուղղված է հանրապետության պտղաբուծությունում ինտենսիվ տեխնոլոգիաների ներդրմանը: Ծրագիրն իրականացվում է ՀՀ Արագածոտնի, Վայոց Ձորի և Տավուշի մարզերում: Նախատեսվում է մինչև 2016 թվականի ավարտը հիմնել 306 հա կորիզավոր և ընկուզավոր ինտենսիվ, նոր տեխնոլոգիաներով մշակվող պտղատու այգիներ, որոնք ապահովված կլինեն կաթիլային ոռոգմամբ, իսկ կորիզավոր պտղատեսակներով հիմնված այգիները՝ նաև կարկտապաշտպան ցանցերով:

<u>Անասնապահություն</u>

20. Վերջին ժամանակահատվածում անասնագլխաքանակի աճի միտումները նախադրյալ հանդիսացան անասնաբուծական հիմնական մթերքների արտադրության ծավալների ավելացման համար: 2013 թվականի հունվարի 1-ի դրությամբ, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, տավարի գլխաքանակն ավելացել է 10.3, այդ թվում կովերինը՝ 7.0 %-ով, մանր եղջերավորների գլխաքանակի աճը կազմել է 14.3 %: Առավել մեծ աճ գրանցվել է խոզերի գլխաքանակի համար՝ կազմելով 34.2 %:
21. Անասնագլխաքանակի աճը կարևոր նախադրյալ է հանդիսացել 2013 թվականին անասնապահական մթերքների արտադրության ծավալների ավելացման համար: ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալներով 2013 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին անասնապահության համախառն արտադրանքը կազմել է 292.4 մլրդ դրամ, որը գերազանցում է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը 6.1 %-ով:
22. Համաձայն օպերատիվ տվյալների՝ 2013 թվականին նախորդ տարվա համեմատությամբ ավելացել են հիմնական անասնաբուծական մթերքների արտադրության ծավալները: Անասնապահական հիմնական մթերքների արտադրության ծավալների տվյալները ներկայացվում են ստորև.

	2012թ. փաստացի	2013թ. օպերատիվ	2013թ.-ը 2012թ. նկատմամբ, %
Միս (կենդանի քաշով), հազ. տոննա	130.3	144.0	110.5
Կաթ, հազ. տոննա	618.2	655.0	105.9
Ձու, մլն հատ	658.1	680.0	103.3

23. Անասնաբուծության խթանմանը նպաստել են վերջին տարիներին իրականացվող մի շարք պետական ծրագրեր: Մասնավորապես, **<<Տավարաբուծության զարգացման ծրագրի>>** շրջանակներում հանրապետություն է ներկրվել 1811 գլուխ տոհմային երինջ: 2013 թվականին ներկրվել է 479 գլուխ: Ներկրված կենդանիներից տարեկան ապահովվում է 5-6 հազար կգ միջին կաթնատվություն, իսկ առանձին կենդանիներից տարեկան ստացվում է ավելի քան 10 հազար կգ կաթ:

24. Զգալի առաջընթաց է նկատվում ոչխարաբուծության ոլորտում: Ոչխարների արտահանումը լուրջ խթան է ոլորտի զարգացման համար, և այդ նպատակով նախարարությունը հետևողական աշխատանքներ է տանում ոչխարների արտահանման ծավալներն ավելացնելու և ոչխարների մորթի համար նախատեսված ժամանակակից սպանդանոցները շահագործելու ուղղությամբ:

25. 2013 թվականի առաջին 9 ամիսներին, ըստ մաքսային վիճակագրության տվյալների, արտահանվել է 62.9 հազ. գլուխ մանր եղջերավորներ, 2012թ. նույն ժամանակահատվածի 26.4 հազ. գլխի դիմաց:

26. Հանրապետությունում անասնաբուծության զարգացմանը, ինչպես նաև բնական կերահանդակների արդյունավետ օգտագործմանն է ուղղվել 2011 թվականի հուլիսից մեկնարկած **«Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության»** ծրագիրը:

27. Հանրապետության համար հեռանկարային է համարվում **արդյունագործական ձկնաբուծությունը**: Ձկնաբուծության ոլորտում շարունակվել են նախորդ տարվա ձեռքբերումները: 2013 թվականին հանրապետությունում արտադրվել է ավելի քան 11.0 հազ. տոննա ապրանքային ձուկ, որը նախորդ տարվա ցուցանիշը գերազանցում է շուրջ 2.7 հազար տոննայով կամ 30.0 %-ով: Կտրուկ ավելացել է նաև հանրապետությունից թարմ, պաղեցված, սառեցված և վերամշակված ձկնամթերքի արտահանման ծավալը՝ կազմելով գրեթե 2.2 հազար տոննա, ինչը 400 տոննայով գերազանցում է նախորդ տարվա ցուցանիշը:

28. Հանրապետությունում անասնապահության համակարգված զարգացման նպատակով մշակվել են <<ՀՀ գյուղատնտեսական կենդանիների արհեստական սերմնավորման>> ծրագրի, <<ՀՀ թռչնաբուծության զարգացման>> և <<ՀՀ ձկնաբուծության զարգացման>> հայեցակարգերի նախագծերը:

<u>Բուսասանիտարիայի, անասնաբուժասանիտարիայի ոլորտ</u>

29. 2013 թվականին «**Անասնաբուժասանիտարիայի, սննդամթերքի անվտանգության և բուսասանիտարիայի ոլորտում ծառայությունների մատուցում**» ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության տարածքում գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի բուսասանիտարիայի վիճակի գնահատման, բույսերի վնասակար օրգանիզմների ժամանակին հայտնաբերման, հաշվառման, տարածման արեալների, վնասակարության տնտեսական շեմերի ճշտման, կանխատեսման, տարածման կանխարգելման նպատակով իրականացվել է բուսասանիտարական մոնիթորինգ 119.5 հազ. հա-ի վրա: Բուսասանիտարական մոնիթորինգի միջոցառումների արդյունքները հիմք են ծառայել բույսերի պաշտպանության պետական ծրագրի մշակման և իրականացման համար:

30. Հանրապետությունում կայուն անասնահամաճարակային իրավիճակի ապահովմանն է ուղղվել **<<Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում>>** ծրագիրը, որն իրականացվում է մարդկանց և կենդանիների համար առավել վտանգավոր 11 հիվանդություններին դեմ: 2013 թվականին իրականցվել են 10.5 մլն պայմանական գլուխ հակահամաճարակային միջոցառումներ: Իրականացված միջոցառումների արդյունքում, չնայած հիվանդությունների եզակի դեպքերի, ընդհանուր առմամբ հանրապետության անասնահամաճարակային վիճակը եղել է կայուն:

Գյուղատնտեսական հումքի մթերում, իրացում

31. Գյուղատնտեսության զարգացման համար առանձնակի կարևորվել է գյուղատնտեսական մթերքներ վերամշակող արդյունաբերության զարգացումը և այս բնագավառում ծառացած խնդիրների լուծումը: Ներկայումս գյուղատնտեսական մթերքներ վերամշակող ոլորտին բաժին է ընկնում արդյունաբերության համախառն արտադրանքի շուրջ 35.0 %-ը:

32. 2013 թվականին ընդլայնվել են գյուղատնտեսական հումք արտադրողների և վերամշակողների միջև պայմանագրային հարաբերությունները: Մինչև մթերումների սկիզբը գյուղացիական տնտեսությունների և վերամշակող ընկերությունների միջև կնքվել է 9.3 հազ. պտուղ բանջարեղենի և խաղողի գնման պայմանագիր: Կնքված պայմանագրերի քանակը գրեթե 35 %-ով գերազանցում է նախորդ տարվա ցուցանիշը: Պայմանագրերի շրջանակներում գյուղացիական տնտեսություններին տրամադրվել է 78.0 մլն. դրամ կանխավճար, 250.5 մլն. դրամի բուժանյութ և այլ օժանդակություն:

33. Հաշվետու տարում մթերումների գործընթացն ընթացել է սահուն: 2013թ. հանրապետության պտուղբանջարեղեն վերամշակող ընկերությունների կողմից մթերվել է 56.8 հազ. տոննա պտուղբանջարեղեն, որից՝ 28.0 հազ. տոննա բանջարեղեն և 28.8 հազ. տոննա պտուղ, այդ թվում՝ 13.0 հազ. տոննա ծիրան: Ծիրանի մթերման ծավալը գերազանցել է նախորդ տարվա մակարդակը 47.5 %-ով: 2013 թվականին մթերվել է 167.2 հազ. տոննա խաղող, նախորդ տարվա 156.6 հազ. տոննայի դիմաց:

34. Վերջին երկու տարիներին էական դրական տեղաշարժեր են գրանցվել գյուղատնտեսական հումքի մթերումների դիմաց կատարված վճարումների գործընթացում: 2013 թ. մթերված հումքի համար վճարումները գրեթե ամբողջությամբ կատարվել են մինչև տարեվերջ:

35. 2013 թվականին հանրապետությունից արտահանվել է 64.5 հազ. տոննա պտուղբանջարեղեն, խաղող և կարտոֆիլ, որից՝ 23.3 հազ.տոննա ծիրան, 24.0 հազ. տոննա կարտոֆիլ: Ընդհանուր առմամբ, ընթացիկ տարում արտահանված բուսաբուծական մթերքների ծավալները գերազանցում են 2012թ. նույն ժամանակահատվածի մակարդակը 2.1 անգամ:

36. Գյուղացիական տնտեսությունների կողմից արտադրված մթերքների իրացման նպատակով, մթերումների գործընթացին զուգահեռ, աշխատանքներ են իրականացվել նաև դրանց վաճառքի աջակցության ուղղությամբ: Մայրաքաղաքում հանգստյան օրերին կազմակերպվել է գյուղատնտեսական մթերքների երկու տոնավաճառ:

Գյուղատնտեսությունում կոոպերացիայի խթանում

37. Մշակվել է **«Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական կոոպերացիայի զարգացման հայեցակարգի»** նախագիծը, որով հստակեցվել են գյուղատնտեսությունում կոոպերացիայի խթանման քաղաքականության հիմնական ուղղությունները:

38. Նախարարության խորհրդատվական համակարգի միջոցով աջակցություն է ցուցաբերվել գյուղատնտեսական գործունեություն իրականացնող կոոպերատիվների ձևավորմանը: «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» վարկային ծրագրի շրջանակներում հանրապետության 6 մարզերում ստեղծվել են 67 արոտօգտագործողների սպառողական կոոպերատիվներ:

Գյուղատնտեսության ոլորտի մատչելի վարկավորում

39. Հաշվետու ժամանակահատվածում, ՀՀ կառավարության կողմից հաստատված **«Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման կարգին»** համապատասխան, գյուղատնտեսության ոլորտին տրամադրվել են մատչելի տոկոսադրույքով (14 %-ով) վարկեր, որոնց 4 տոկոսային կետը սուբսիդավորվել է, իսկ հանրապետության առավել կարիքավոր 225 համայնքների համար սուբսիդավորվել է վարկերի տոկոսադրույքի 6 տոկոսային կետը:

40. 2011 թվականի ապրիլի սկզբից մինչև 2013 թվականի սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածը գյուղատնտեսությունում տնտեսավարողներին տրամադրվել է 49.4 մլրդ դրամի 57.9 հազ. միավոր վարկ: Ընդհանուր առմամբ, վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման գումարը կազմել է 1.4 մլրդ դրամ:

41. 2011-2012 թվականներին, ինչպես նաև հաշվետու տարում գյուղատնտեսության ոլորտում դրական տեղաշարժերն արդյունք են նաև մատչելի վարկային ներդրումների:

Գյուղատնտեսությունում օգտագործվող ռեսուրսների մատչելիության բարձրացում

42. 2013թ. շարունակվել են **«Հողօգտագործողներին մատչելի գներով ազոտական պարարտանյութի և դիզելային վառելանյութի ձեռքբերման նպատակով պետական աջակցության»** ծրագրերը: 2013 թվականին ծրագրերի շրջանակում գարնան գյուղատնտեսական աշխատանքների համար համայնքներում հողօգտագործողներին է հատկացվել է 30.4 հազ. տոննա ազոտական պարարտանյութ՝ 1 պարկը 6.0 հազ. դրամով և 12.1 մլն լիտր դիզելային վառելանյութ՝ 1 լիտրը 350 դրամ արժեքով: Ծրագրերը, նույն պայմաններով, շարունակվել են նաև հաշվետու տարվա աշնանը: Հանրապետության մարզերին հատկացվել է 7.5 հազ. տոննա ազոտական պարարտանյութ և 3.3 մլն լիտր դիզելային վառելանյութ:

Գյուղատնտեսության տեխնիկական հագեցվածություն

43. 2013 թվականին որոշակի աշխատանքներ են իրականացվել **գյուղատնտեսության տեխնիկական հագեցվածության ուղղությամբ:** Նախարարության կողմից կատարված ուսումնասիրությունների հիման վրա հստակեցվել է գյուղատնտեսական տեխնիկայի պահանջարկը, և Բելոռուսի Հանրապետության հետ բանակցությունների արդյունքում շուկայականից անհամեմատ ցածր գնով հանրապետություն է ներկրվել 120 միավոր ՄՏԶ-82.1 մակնիշի անիվավոր տրակտոր իրենց գյուղատնտեսական գործիքներով: Տեխնիկան կառավարության որոշմամբ իրացվել է ուղղակի վաճառքի և լիզինգի միջոցով:

44. Նշվածից բացի նախարարության համակարգմամբ գործող վարկային ծրագրի շրջանակներում 2012-2013թթ. հանրապետություն է ներկրվել և արոտօգտագործողների սպառողական կոոպերատիվներին և գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոններին է հատկացվել 367 միավոր տրակտոր և գյուղատնտեսական գործիքներ:

Գյուղատնտեսական հողատեսքերի պահպանում, բարելավում և ինժեներական կառուցվածքների վերականգնում

45. ՀՀ կառավարության 28.02.2013թ. № 171-Ն որոշմամբ ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից հատկացված միջոցների հաշվին ՀՀ Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Լոռու, Սյունիքի, Վայոց ձորի և Տավուշի մարզերում իրականացվել են հակահեղեղային միջոցառումներ:

46. Աշխատանքների իրականացման արդյունքում գարնանային վարարումների ժամանակ կկանխվի վերոհիշյալ հատվածներում գետերի ու հեղեղատարների ափերի և ափապաշտպան արգելաթմբերի քայքայումն ու փլուզումը, առափնյա տարածքները՝ գյուղատնտեսական հողերը, բնակելի տները, ինժեներական կառույցները, շենք-շինությունները և այլն, զերծ կմնան ողողումներից:

47. ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության մասնագետի հետ համատեղ տեղերում կատարված ուսումնասիրությունների արդյունքում նախապատրաստվել ու Արաքս գետի հիմնահարցերի հանձնաժողովի ու ՀՀ հանրային խորհրդի գյուղատնտեսական և բնապահպանական հարցերի հանձնաժողովի նախագահների հետ համաձայնեցվել է 2014 թվականին իրականացվելիք հակահեղեղային միջոցառումների ցանկը: ՀՀ գյուղատնտեսության նախարարի հրամանով հաստատվել է նախատեսվող միջոցառումների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ու փորձաքննության անցկացման աշխատանքների տեխնիկական բնութագիրը:

48. Ի կատարումն ՀՀ վարչապետի համապատասխան հանձնարարականների՝ ՀՀ կառավարություն են ներկայացվել առաջարկություններ գերնորմատիվային ջրապահանջարկ ունեցող հողատարածքներում ոռոգման արդյունավետ եղանակների ներդրման խրախուսման ուղիների ու անհրաժեշտ քայլերի վերաբերյալ, ինչպես նաև գերնորմատիվային ջրապահանջարկ ունեցող հողատարածքներում ոռոգման արդյունավետ եղանակների ներդրման միջոցառումների ժամանակացույցը:

Գիտության ոլորտ

49. ՀՀ գյուղատնտեսության նախարարության համակարգում 2013թ. գործել են «Երկրագործության գիտական կենտրոն», «Բանջարաբոստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոն» ՊՈԱԿ-ները և «Տեխնիկական մշակաբույսերի փորձարարական կայան» ՊՓԲԸ-ն: Հաշվետու ժամանակահատվածում գիտական հետազոտությունները հիմնականում իրականացվում են գյուղատնտեսական մշակաբույսերի սելեկցիայի, սերմնաբուծության, համաշխարհային հավաքածուներից և գյուղատնտեսական հետազոտությունների միջազգային կենտրոնների սելեկցիոն տնկարաններից ստացված սորտերի, հիբրիդների ու սելեկցիոն գծերի, ինչպես նաև ոչ ավանդական մշակաբույսերի փորձարկման ու սելեկցիոն նպատակներով օգտագործման, դրանց մշակության բնակլիմայական գոտիների ընդլայնման և այլ ուղղություններով:
50. Շարունակվել են աշխատանքները նաև ԱՊՀ-ի և արտասահմանյան այլ երկրների գյուղատնտեսական հետազոտական կենտրոնների հետ:

<u>Խորհրդատվության ոլորտ</u>

51. 2013թ. շարունակվել են նախարարության համակարգի գյուղատնտեսության աջակցության հանրապետական (ԳԱՀԿ) և մարզային կենտրոնների (ԳԱՄԿ) կողմից գյուղատնտեսությունում տնտեսավարողներին մասնագիտական խորհրդատվության մատուցման և տեղեկատվության տարածման ուղղությամբ տարվող աշխատանքները:
52. 2013 թվականի ընթացքում ԳԱՄԿ-երի կողմից կազմակերպվել և անցկացվել է 1039 սեմինար և 836 դաշտային ուսուցում, իրականացվել է 20970 խորհրդատվական միջոցառում, 172 փորձացուցադրական աշխատանք, եթեր է հեռարձակվել 87 ռադիոհեռուստահաղորդում: Տպագրվել և տարածվել է 445 անուն խորհրդատվական թերթիկ և գրքույկ՝ 111595 ընդհանուր տպաքանակով: Թողարկվել է 145 համար թերթ՝ 191900 ընդհանուր տպաքանակով:
53. ԳԱՀԿ-ի կողմից «ԳԱՄԿ-ի խորհրդատուների ուսուցողական դասընթացներ» ծրագրերի շրջանակներում 10 մարզերում գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոնների խորհրդատուների համար կազմակերպվել են անասնաբուժության, կերարտադրության և բույսերի պաշտպանության թեմաներով ուսուցողական դասընթացներ (մասնակիցների թիվը 278):

<u>Միջազգային համագործակցություն</u>

54.Միջազգային կազմակերպություններին անդամակցության շրջանակներում շարունակվել է համագործակցությունը ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության, Կոդեքս Ալիմենտարիուսի հանձնաժողովի, Համաշխարհային Բանկի, Գյուղատնտեսության Զարգացման Միջազգային Հիմնադրամի, Կենդանիների առողջության միջազգային կազմակերպության և ԱՊՀ Ագրոպարենային հարցերով միջկառավարական խորհրդի հետ:
55. Շարունակվել են աշխատանքները ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության կողմից տեխնիկական համագործակցության ծրագրերի իրականացման ուղղությամբ: Ստորագրվել և գործողության մեջ են մտել <<Տեխնիկական և ինստիտուցիոնալ աջակցություն Հայաստանի անասնաբուժական ծառայություններին>> և <<Բանջարաբուծության և սերմնաբուծության համակարգերի զարգացում>> ծրագրերը:
56. Ստորագրվել են գյուղատնտեսության բնագավառում համագործացության մասին համաձայնագրեր Մոլդովայի Հանրապետության և Լեհաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունների հետ:
57. Առանձնակի ուշադրություն է դարձվել տարածաշրջանային համագործակցության հարցերին՝ Սևծովյան Տնտեսական Համագործակցության (BSEC), Չորային գոտիներում գյուղատնտեսական հետազոտությունների միջազգային կենտրոնի (ICARDA) հետ, որի արդյունքում իրականացվել են գյուղատնտեսության զարգացմանը նպաստող ծրագրեր:
58. 2013 թվականին ակտիվ աշխատանքներ են տարվել առևտրատնտեսական հարցերով միջկառավարական բազմաթիվ հանձնաժողովների աշխատանքներին մասնակցության ապահովման ուղղությամբ:

59. Նախարարությունն աջակցել է հանրապետության ագրովերամշակման բնագավառի տնտեսավարող սուբյեկտներին Հայաստանում և արտասահմանում կազմակերպվող միջազգային ցուցահանդեսներին մասնակցելու համար:
60. 2013 թվականի հոկտեմբերի 20-ին Երևանում կազմակերպվել է «Հայագրոֆորում» միջազգային համաժողովը:

Տեսչական գործունեություն

61. Նախարարության կողմից իրականացվել են վարչական ռեգիստրի վարման աշխատանքներ գյուղատնտեսական տեխնիկայի գրանցման և պետհամարանիշների հատկացման (475 միավոր), տեխնիկայի վերագրանցման (722 միավոր), տրակտորիստ-մեքենավարի վարման իրավունքի հատկացման ուղղությամբ: Աշխատանքներ են տարվել թվով 364 սեփականատերերի համար ՀՀ բանկերում գյուղատնտեսական տեխնիկայի գրավադրման գործընթացը կազմակերպելու ուղղությամբ:

Լիցենզավորման ոլորտ

62. Հաշվետու ժամանակաշրջանում լիցենզավորման բնագավառում իրականացվել են հետևյալ աշխատանքները՝
1) ստացվել է բույսերի պաշտպանության քիմիական և կենսաբանական միջոցների վաճառք իրականացնելու 26 հայտ, տրամադրվել է 24 լիցենզիա,
2) ստացվել է թորած ալկոհոլային խմիչքների արտադրություն իրականացնելու 7 հայտ, տրամադրվել է 7 լիցենզիա,
3) ստացվել է բույսերի պաշտպանության քիմիական և կենսաբանական միջոցների վաճառքի իրականացման լիցենզիայի գործողության դադարեցման 3 դիմում, որոնք բավարարվել են,
4) ստացվել է թորած ալկոհոլային խմիչքների արտադրություն իրականացման լիցենզիայի գործողության դադարեցման 11 դիմում, որոնք բավարարվել են,
5) ստացվել է բույսերի պաշտպանության քիմիական և կենսաբանական միջոցների վաճառք իրականացնելու լիցենզիաների վերաձևակերպման 3 դիմում, որոնք բավարարվել են:
63. Հաշվետու ժամանակաշրջանում պետական տուրք է գանձվել 559.8 մլն դրամ:

Անտառային տնտեսություն

64. «Հայանտառ» ՊՈԱԿ «անտառտնտեսություն» մասնաճյուղերում 2013 թվականին շաբաթօրյակների միջոցով իրականացվել են նախորդ տարիներին հիմնադրված անտառմշակույթների լրացում 6.4 հա տարածության վրա և սեփական եկամուտների հաշվին՝ 336,7 հա նախորդ տարիներին հիմնված անտառմշակույթների լրացում և 684 հա խնամք, հիմնադրվել է տնկարան՝ 2.22 հա-ի վրա:
65. ՀՀ գյուղատնտեսության նախարարության և «Հայանտառ» ՊՈԱԿ-ի մի շարք միջազգային և այլ կազմակերպությունների հետ համագործակցության արդյունքում իրականացվել են 263.9 հա անտառապատման, 114.1 հա անտառների լրացման, 183.6 հա կոճղաշիվային վերաճի աջակցման աշխատանքներ:
66. 2013թ. հունվարի 1-ից մինչև նոյեմբերի 30-ի դրությամբ <<Անտառտնտեսություն>> մասնաճյուղերի կողմից կազմվել են ընդամենը 112 անտառխախտման արձանագրություններ, որոնցից 2-ը անասունների արածեցման, իսկ 110 արձանագրություն՝ 697 ապօրինի հատված ծառերի վերաբերյալ: Կազմված արձանագրություններից 15-ն ուղարկվել են ոստիկանության տարածքային բաժիններ, իսկ 97 արձանագրություն՝ ՀՀ բնապահպանական պետական տեսչության մարզային բաժիններ: ՀՀ բնապահպանության նախարարության բնապահպանական տեսչության կողմից 4 անտառտնտեսության մասնաճյուղերի անտառային տարածքներում կատարված ստուգումներով արձանագրվել է ապօրինի հատված 160 ծառ:
67. 2013թ. համար մշակվել է անտառների հակահրդեհային միջոցվառումների ծրագիր, որտեղ նշված են ինչպես իրականացվելիք կանխարգելիչ միջոցառումների, այնպես էլ բռնկված հրդեհների դեպքում կոորդինացված գործողությունների վերաբերյալ դրույթ: 2013թ. նոյեմբերի 30-ի դրությամբ <<Անտառտնտեսություն>> մասնաճյուղերում արձանագրվել է հրդեհի 19 դեպք՝ 87.6 հա ընդհանուր տարածքով, որից 23.1 հա՝ անտառածածկ, իսկ 64.5

հա՝ ոչ անտառածածկ տարածքի վրա: Հրդեհները մարվել են մասնաճյուղերի, մարզային փրկարարական ծառայությունների աշխատակիցների և համայնքների ազգաբնակչության համատեղ ուժերով:

68. Համակարգի <<Անտառտնտեսություն>> մասնաճյուղերում իրականացվող անտառապաթոլոգիական ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ անտառածածկ տարածքներում վնասատուներով և հիվանդություններով վարակված է շուրջ 11.5 հազ. հա: 2013թ. առաջին կիսամյակում հիվանդություններով և վնասատուներով վարակված անտառային տարածքներից շուրջ 8.9 հազ. հա-ի իրականացվել է ավիաքիմիական պայքարի աշխատանքներ: Աշնանը մկնանման կրծողների դեմ քիմիական պայքարի աշխատանքներ է տարվել 429.2 հա տարածության վրա:

<u>Գյուղատնտեսության նախարարության համակարգում գործող վարկային ծրագիր</u>

69. Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության ծրագիրը ՀՀ Ազգային ժողովի կողմից վավերացվել է 2011 թվականի հունիսի 23-ին և գործողության մեջ է մտել 2011 թվականի հուլիսի 26-ին:

70. Ծրագիրն իրականացվում է հանրապետության 6 մարզի (Արագածոտն, Լոռի, Շիրակ, Տավուշ, Գեղարքունիք, Սյունիք) 55 համայնքում: Ծրագրի նպատակն է աջակցել անասնապահական ուղղվածություն ունեցող բարձրլեռնային և սահմանամերձ համայնքներին՝ հեռագնա արոտների անցանելիության ապահովման, ջրարբիացման, դեգրադացված արոտների վերականգնման, ինչպես նաև կաթի ընդունման և վերամշակման կարողությունների ստեղծման միջոցով: Համայնքներում ստեղծելով արոտօգտագործողների սպառողական կոոպերատիվներ՝ խորհրդատվական համակարգի միջոցով աջակցություն կցուցաբերվի նորարարական տեխնոլոգիաների ներդրմանը, անասնաբուժական և տոհմային աշխատանքների բարելավմանը:

71. Ըստ բաղադրիչների կատարվել են հետևյալ հիմնական աշխատանքները.

1) **<<Համայնքների արոտավայրերի և անասնապահության կառավարման համակարգ>>** բաղադրիչ.

- ՀՀ 6 մարզի (Արագածոտն, Լոռի, Շիրակ, Տավուշ, Գեղարքունիք, Սյունիք) ծրագրով նախատեսված 55 համայնքի փոխարեն աշխատանքներ են իրականացվում լրացուցիչ ևս 12 համայնքում,
- նշված մարզերի 67 համայնքում հիմնադրվել են «Համայնքի արոտօգտագործողների միավորում» սպառողական կոոպերատիվներ ու «Համայնքի արոտավայրերի կառավարման և անասնապահության զարգացման» հանձնաժողովներ,
- 47 համայնքում ավարտվել են արոտավայրերի ջրարբիացման համակարգերի շինարարական աշխատանքները (114 կմ ջրագիծ, 150 հատ խմոց),
- 48 համայնքի արոտօգտագործողների միավորում սպառողական կոոպերատիվներին տրամադրվել է 324 միավոր գյուղտեխնիկա, այդ թվում՝ 45 կոոպերատիվի տրամադրվել է 66 անիվավոր տրակտոր,
- մարզերի 55 համայնքի համար ավարտվել են կերհանդակների քարտեզագրման, գնահատման և կենդանիների հերթափոխ արածեցման սխեմաների մշակման աշխատանքները,
- 42 համայնքի կոոպերատիվների անդամների, խորհրդի, կոմիտեի և համայնքապետարանի ներկայացուցիչների համար կազմակերպվել է ուսուցում:

2) **<<Գյուղատնտեսությանն աջակցող ծառայությունների հզորացում>> բաղադրիչ**

ա. «Գյուղատնտեսական խորհրդատվական ծառայություններ» ենթաբաղադրիչ

Ենթաբաղադրիչի շրջանակներում աշխատանքներն իրականացվում են Գյուղատնտեսության աջակցության հանրապետական (ԳԱՀԿ) և 10 մարզային կենտրոնների (ԳԱՄԿ) համար:

- **Նորարարական ծրագրերի ներդրում**

197 առաջարկությունից հաստատել է 110 ծրագիր, որից 69-ը իրականացվել է, մեկը, եղանակային պայմաններից ելնելով, չի իրականացվել, իսկ 40-ը գտնվում է ավարտական փուլում:

- **Ուսուցողական դասընթացների կազմակերպում**

ԳԱՄԿ-երի գյուղատնտեսության գծով տեղական խորհրդատուների մասնագիտական գիտելիքների կատարելագործման նպատակով պայմանագիր է կնքվել ԳԱՀԿ-ի հետ դասընթացներ կազմակերպելու համար: Ըստ ժամանակացույցի՝ 2011-2012թթ.-ների դասընթացներին մասնակցել են 278, իսկ 2012-2013 թթ.-ին՝ 281 խորհրդատու: Անասնապահությամբ զբաղվող ֆերմերների գիտելիքների կատարելագործման նպատակով դասընթացներն ավարտվել են, մասնակցել են 878 ֆերմեր:

- **Տեղական խորհրդատվության տրամադրում**

2012 և 2013 թթ-ի ընթացքում կազմակերպվել է 14 դասընթաց տնտեսագիտական օրենսդրության գծով ԳԱՀԿ/ԳԱՄԿ-երի տնօրենների և հաշվապահների համար:

բ. «Համայնքներում կենդանիների առողջությանն ուղղված ծառայություններ» ենթաբաղադրիչ

Ենթաբաղադրիչի շրջանակներում իրականացվել են ծրագրով նախատեսված հետևյալ աշխատանքները.

- **Անասնաբույժների մոբիլիզացում ուսումնական ծրագիր**

ՀՀ 6 մարզերում իրականացվում է անասնաբույժների ուսուցում, որին մասնակցել են 76 անասնաբույժ:

- **Անասնաբուժական սպասարկման կենտրոններ**

Անասնաբուժական սպասարկման կենտրոններ հիմնելու համար իրականացվել են հողի նկատմամբ սեփականության փոխանցման աշխատանքներ: Ավարտվել են Խնձորեսկի և Արտաշավանի անասնաբուժական սպասարկման կենտրոնների նախագծման աշխատանքները, իրականացվում են շինարարական աշխատանքներ: ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի անասնաբուժական սպասարկման կենտրոնի նախագծման աշխատանքները իրականացման փուլում են:

- **Անասնաբույժների համար սարքավորումներ և գործիքներ**

Պայմանագիր է կնքվել մատակարար կազմակերպության հետ:

3) <<**Մրցակցային դրամաշնորհների ծրագիր**>> **բաղադրիչ**

Ծրագրի սկզբից իրականացվել է 5 փուլի մրցույթ, որոնցից չորս փուլի մրցույթների արդյունքում հաղթող են ճանաչվել 30 ծրագիր: Նշված 30 ծրագրերից 5-ը ավարտված է, 7-ը գտնվում է ավարտման փուլում և ներկայացված է անկախ գնահատողի գնահատմանը, իսկ մնացած 18 ծրագրերը գտնվում են իրականացման տարբեր փուլերում: 30 ծրագրերի իրականացման ընթացքում ընդգրկվել են 144 ուղղակի և 26110 անուղղակի շահառուներ:

Ընդհանուր առմամբ, ՀՀ գյուղատնտեսության նախարարության 2013 թվականի գործունեությունը նպատակաուղղված է եղել ոլորտի գերակա ուղղություններին համապատասխան աշխատանքների իրականացմանը, ընթացիկ հիմնախնդիրների լուծմանը: